

ՇՇԱԼՑՎԱԾ ԽՄԵԼՈՒ ՋՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ  
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն պահանջներով կարգավորվում են մարդկանց սպառման համար նախատեսված խմելու ջրին՝ տարայավորված շշերում, կոնտեյներներում, փաթեթներում (այսուհետ՝ շշացված ջուր), ներկայացվող անվտանգության պահանջների հետ կապված հարաբերությունները:

2. Սույն որոշման գործողությունը չի տարածվում հանքային բնական ջրերի (բուժիչ, բուժիչ-սեղանի հանքային ջրերի) վրա:

3. Սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջների համապատասխանության նկատմամբ հետազոտությունների անցկացման ժամանակ հնարավոր է տիպային նմուշի (միևնույն արտադրողի կողմից արտադրված միևնույն անվանմամբ պատրաստի արտադրանքի նմուշ՝ արտադրանքի թողարկումը կանոնակարգող տեխնիկական պայմաններին և տեխնոլոգիական հրահանգին համապատասխան) առանձնացումը:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Շշացված ջրերի արտադրման ու իրացման գործընթացը թույլատրվում է հետևյալ փաստաթղթերի առկայությամբ՝

- 1) շշացված խմելու ջրի անվտանգությունը հիմնավորող.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված փաստաթուղթ.

3) սահմանված կարգով հաստատված և համաձայնեցված տեխնիկական պայմանները, տեխնոլոգիական հրահանգը և (կամ) ստանդարտացման փաստաթղթերը:

5. Մինթետիկ նյութերից պատրաստված տարողություններում շշայցված ջրերի պահման ժամկետներն ու ջերմաստիճանային պայմանները պետք է համապատասխանեն պատրաստի արտադրանքի վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերում նշված պահանջներին:

6. Չի թույլատրվում շշայցման համար նախատեսված խմելու ջրի մշակման ժամանակ քլոր պարունակող միջոցների կիրառումը. վարակազերծման գերադասելի մեթոդներ են օզոնացումն ու մշակման ֆիզիկական մեթոդները, մասնավորապես, ուլտրամանուշակագույն ճառագայթումը:

7. Շշայցված ջրեր արտադրողներն ապահովում են շշերի և (կամ) տարաների վարակազերծումը, ինչպես նաև համաճարակային առումով և, ըստ քիմիական կազմի, անվտանգությունը երաշխավորող ջրի վարակազերծումը կամ պահածոյացումը:

8. Թույլատրվում է շշայցման համար օգտագործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող տարաներ՝ հաշվի առնելով դրանցում արտադրանքի առավելագույն պահման ժամկետները:

### III. ՇՇԱԼՑՎԱԾ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ ԿԱՐԳԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

9. Կախված աղբյուրից՝ խմելու ջրերը դասակարգվում են՝

1) ստորգետնյա ջրաղբյուրից ստացված (արտեզյան, մաքուր աղբյուրի, գրունտային).

2) մակերեսային ջրաղբյուրից ստացված (գետային, լճային, սառցային):

10. Կախված մշակման եղանակից՝ խմելու ջրերը դասակարգվում են՝

1) մաքրված կամ հավելյալ մաքրված (ջրատար ցանցից).

2) լավորակված (լրացուցիչ հարստացված կենսականորեն անհրաժեշտ մակրո- և միկրոտարրերով):

11. Կախված կենտրոնական ջրամատակարարման համակարգի ջրերին ներկայացվող հիգիենիկ պահանջների նկատմամբ բարելավված ջրի որակից, ինչպես նաև լրացուցիչ բժշկական սարքանական պահանջներից՝ շշալցված ջրերը դասակարգվում են՝

1) առաջին կարգի՝ խմելու ջուր (անկախ ստացման աղբյուրից), որն անվտանգ է առողջության համար և՛ համաճարակային, և՛ ճառագայթային առումներով, ամբողջությամբ համապատասխանում է զգայորոշման ցուցանիշների բարձր չափորոշիչներին, ունի անվնաս քիմիական կազմ և կայուն պահպանում է խմելու ջրի բարձր որակը.

2) բարձր կարգի՝ խմելու ջուր՝ ինքնուրույն ստորգետնյա ջրաղբյուրներից, հուսալի պաշտպանված կենսաբանական և քիմիական աղտոտումից, որն ունի լավագույն որակ:

Առաջին կարգի ջրերի համար բոլոր չափորոշիչների պահպանման ժամանակ բարձր կարգի խմելու ջուրը պետք է բավարարի մարդու ֆիզիոլոգիական կարիքները՝ ըստ հիմնական կենսաբանորեն անհրաժեշտ մակրո- և միկրոտարրերի պարունակության և ավելի խիստ չափորոշիչների՝ ըստ մի շարք զգայորոշման, ֆիզիկաքիմիական ցուցանիշների ու քիմիական կազմի:

#### IV. ՇՇԱԼՑՎԱԾ ՋՐԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

12. Շշալցված ջրերը պետք է համապատասխանեն հիգիենիկ նորմատիվներին՝ արտադրության, փոխադրման, պահման ժամանակ, ինչպես նաև սահմանված ամբողջ պիտանիության ժամկետի ընթացքում:

13. Շշալցված ջրերի անվտանգության պահանջներն են՝

1) բարենպաստ զգայորոշման հատկություններ.

2) անվնասակարություն՝ ըստ քիմիական կազմի (հիմնական աղային բաղադրիչների, վտանգավորության I, II և III դասերի ծանր մետաղների, թունավոր ոչ մետաղական

տարրերի և հալոգենների, մարդու կողմից ստեղծված և բնական ծագում ունեցող օրգանական նյութերի պարունակություն)։

3) համաճարակային առումով խմելու ջրի անվտանգություն (ըստ մանրէաբանական, վիրուսոլոգիական և մակարոծաբանական ցուցանիշների)։

4) ճառագայթային առումով խմելու ջրի անվտանգություն։

14. Շշայցված ջրերի մակրո- և միկրոտարրային կազմի ֆիզիոլոգիական լիարժեքությունը որոշվում է դրա համար սահմանված չափորոշիչներին համապատասխան։

15. Որպես շշայցված ջրերի պահածոյացնող նյութ՝ թույլատրվում է օգտագործել արծաթ, յոդ, ածխածնի երկօքսիդ։

16. Մանկական սննդի պատրաստման համար նախատեսված շշայցված ջրերը (երեխաների արհեստական կերակրման ժամանակ) պետք է համապատասխանեն նորմատիվային մեծություններին՝ ըստ բարձր կարգի ջրի հիմնական ցուցանիշների, ինչպես նաև հետևյալ լրացուցիչ պահանջներին՝

1) չի թույլատրվում արծաթի, ածխածնի երկօքսիդի օգտագործումը՝ որպես պահածոյացնող նյութ։

2) ֆտորիդ իոնների պարունակությունը չպետք է գերազանցի 1 մգ/լ խտությունը։

3) յոդիդ իոնների պարունակությունը 0,04-0,06 մգ/լ խտության սահմաններում է։

4) մանկական սննդի պատրաստման համար նախատեսված՝ շշայցված ջրի լավորակումը, ըստ յոդի, պարտադիր չէ, քանի որ մանկական սննունդը հիմնականում կարգավորված է ըստ յոդի պարունակության։

V. ՇՇԱԼՑՎԱԾ ՋՐԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ, ՄԱԿՆՇՄԱԸ, ՓՈԽԱԴՐՄԱՆԸ  
ԵՎ ՊԱՀՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

17. Խմելու ջուրը լցվում է սննդամթերքի հետ շիման համար նախատեսված նյութերից պատրաստված սպառողական տարաներ:

18. Շշալցված ջրի մակնշումը պարունակում է գործող նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանող տեղեկատվություն: Մանկական սննդի համար նախատեսված՝ շշալցված ջրի մակնշումը պարունակում է տեղեկատվություն շիշը բացելուց հետո ջրի օգտագործման պայմանների մասին:

19. Շշալցված ջրերի պահման և փոխադրման պայմանները համապատասխանում են սահմանված կարգով հաստատված պատրաստի արտադրանքի վերաբերյալ արտադրողի նորմատիվ փաստաթղթերում նշված պահանջներին:

VI. ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԵՎ ԴՐԱ ՀԻՄՔՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԸՄՊԵԼԻՔՆԵՐԻ  
ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ  
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

20. Խմելու ջրում ռադիոնուկլիդների պարունակությունը պետք է լինի այնպես, որպեսզի խմելու ջրի սպառման հաշվին բնակչության ճառագայթման տարեկան չափը կազմի 0,1 մՋվ:

21. Խմելու ջրի որակի նախնական գնահատումը, ըստ ճառագայթային անվտանգության ցուցանիշների, կարող է տրվել ըստ տեսակարար գումարային ալֆա ( $U_a$ ) և բետա ( $U_b$ ) ակտիվության:

22. Եթե  $U_a$  և  $U_b$  մեծությունները ցածր են համապատասխանաբար 0,2 և 1 Բկ/կգ չափից, ապա ջրի հետագա հետազոտությունը պարտադիր չէ:

23. Նշված մակարդակները գերազանցելու դեպքում որոշվում է ջրում առանձին ռադիոնուկլիդների պարունակությունը:

24. Ջրում բնական և տեխնածին մի շարք տեսակի ռադիոնուկլիդների առկայություն հայտնաբերելու դեպքում կատարվում է հետևյալ պայմանը՝  $\sum U_i / \sum U_i \leq 1$ ,

որտեղ՝

1) Այս օրվա ջրում ռադիոնուկլիդի տեսակարար ակտիվությունն է.

2) ԲԿ/ԿԳ, ՆՄՂ- ն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի N 1240 -Ն որոշման N 2 հավելվածի N 7 աղյուսակով սահմանված համապատասխան ներգործության մակարդակներն են:

25. Սույն պահանջների 24-րդ կետում նշված դեպքում խմելու ջրի ճառագայթվածության նվազեցման միջոցառումներ չեն իրականացվում:

26. Սույն որոշման 24-րդ կետում նշված պայմանը չկատարելու դեպքում պետք է իրականացվեն խմելու ջրում ռադիոնուկլիդների պարունակության նվազեցման պաշտպանողական բնույթի միջոցառումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ Ն Ե Ր

ՇՇԱԼՑՎԱԾ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

1. Խմելու ջրի զգայորոշման հատկությունները որոշվում են N 1 աղյուսակով սահմանված նորմատիվներին, ինչպես նաև նույն աղյուսակով սահմանված ջրի զգայորոշման հատկությունների վրա ազդող հիմնական աղային բաղադրիչների պարունակության նորմատիվներին համապատասխան:

Աղյուսակ N 1

Ցուցանիշները	Չափի միավորը	Շշայցված խմելու ջրի որակի նորմատիվները, ոչ ավելի		Վնասակարության ցուցանիշը (ըստ օրգանիզմի վրա թունավոր ազդեցության նորմավորված աղային կազմի ցուցանիշներ)
		առաջին կարգի	բարձր կարգի	
<b>ՕՐԳԱՆՈԼԵՊԻԿ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ</b>				
1) զգայորոշման ցուցանիշները				
Հոտ՝ 20°C-ում	բալ	0	0	զգբ
Հոտ՝ մինչև 60°C տաքացման դեպքում		1	0	
Կողմնակի համ	բալ	0	0	զգբ
Գունավորություն	աստիճան	5	5	զգբ
Պղտորություն	ՊՄՖ (պղտորության միավորը՝ ըստ ֆորմազինի)	1,0	0,5	զգբ
Ջրածնային ցուցանիշ (pH), սահմաններում	միավորներ	6,5-8,5	6,5-8,5	զգբ
2) աղային կազմի ցուցանիշները (ըստ ջրի զգայորոշման (զգայորոշման) հատկությունների վրա ազդեցության՝ աղային կազմի նորմավորված ցուցանիշներ)				
Քլորիդներ	մգ/լ	250	150	զգբ
Սուլֆատներ	մգ/լ	250	150	զգբ
Ֆոսֆատներ (PO <sub>4</sub> <sup>3-</sup> )	մգ/լ	3,5	3,5	զգբ

2. Ըստ քիմիական կազմի՝ ջրի վնասակարությունը որոշվում է նորմատիվներին համապատասխան՝

1) աղային հիմնական բաղադրիչների պարունակության (N 2 աղյուսակ, «ա» ենթակետ).

2) վտանգավորության I, II և III դասերի ծանր մետաղների պարունակության (N 2 աղյուսակ, «բ» ենթակետ).

3) թունավոր ոչ մետաղական տարրերի և հալոգենների պարունակության (N 2 աղյուսակ, «գ», «դ» ենթակետեր).

4) մարդու կողմից ստեղծված և բնական ծագում ունեցող օրգանական նյութերի պարունակության՝ ըստ ընդհանրացված և առանձին ցուցանիշների (N 2 աղյուսակ, «ե» ենթակետ):

Աղյուսակ N 2

Ցուցանիշները	Չափի միավորը	Շչացված խմելու ջրի որակի նորմատիվները՝ ոչ ավելի		Վնասակարության ցուցանիշը (ըստ օրգանիզմի վրա թունավոր ազդեցության նորմավորված աղային կազմի ցուցանիշները)	Վտանգավորության դասը
1	2	3	4	5	6
<b>ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ</b>					
ա. աղային և գազային կազմի ցուցանիշները (ըստ օրգանիզմի վրա թունավոր ազդեցության նորմավորված աղային կազմի ցուցանիշները)՝					
Սիլիկատներ (ըստ Si)	մգ/լ	10	10	ս-թ	2
Նիտրատներ (ըստ NO <sub>3</sub> )	մգ/լ	20	5	զզբ	3
Ցիանիդներ (ըստ CN <sup>-</sup> )	մգ/լ	0,035	0,035	ս-թ	2
Ծծմբաջրածին (H <sub>2</sub> S)	մգ/լ	0,003	0,003	զզբ	4
բ. թունավոր մետաղներ					
Ալյումինիում (Al)	մգ/լ	0,2	0,1	ս-թ	2
Բարիում (Ba)	մգ/լ	0,7	0,1	ս-թ	2
Բերիլիում (Be)	մգ/լ	0,0002	0,0002	ս-թ	1
Երկաթ (Fe, գումարային)	մգ/լ	0,3	0,3	զզբ	3
Կադմիում (Cd, գումարային)	մգ/լ	0,001	0,001	ս-թ	2
Կոբալտ (Co)	մգ/լ	0,1	0,1	ս-թ	2
Լիթիում (Li)	մգ/լ	0,03	0,03	ս-թ	2
Մանգան (Mn)	մգ/լ	0,05	0,05	զզբ	3
Պղինձ (Cu, գումարային)	մգ/լ	1,0	1,0	զզբ	3
Մոլիբդեն (Mo, գումարային)	մգ/լ	0,07	0,07	ս-թ	2
Նատրիում (Na)	մգ/լ	200	20	ս-թ	2
Նիկել (Ni, գումարային)	մգ/լ	0,02	0,02	ս-թ	3
Մոլիբդեն (Hg, գումարային)	մգ/լ	0,0005	0,0002	ս-թ	1
Սելեն (Se)	մգ/լ	0,01	0,01	ս-թ	2
Արծաթ (Ag)	մգ/լ	0,025	0,0025	ս-թ	3
Կապար (Pb, գումարային)	մգ/լ	0,01	0,005	ս-թ	2
Ստրոնցիում (Sr <sup>2+</sup> )	մգ/լ	7	7	ս-թ	2



Ծարիր (Sb)	մգ/լ	0,005	0,005	ս-թ	2
Քրոմ (Cr <sup>6+</sup> )	մգ/լ	0,05	0,03	ս-թ	3
(Zn <sup>2+</sup> )	մգ/լ	5	3	զզբ	3
գ. թունավոր ոչ մետաղական տարրեր					
Բոր (B)	մգ/լ	1	0,3	ս-թ	2
Արսեն (As)	մգ/լ	0,01	0,006	ս-թ	2
Օզոն (մնացորդային օզոնի պարունակության նկատմամբ հսկողությունն իրականացվում է խառնման խցից հետո՝ 12 րոպեից ոչ պակաս շփման ժամանակահատվածի սպասովմամբ)	մգ/լ	0,1	0,1	զզբ	3
դ. հալոգեններ					
Բրոմիդ իոն	մգ/լ	0,2	0,1	ս-թ	2
Քլոր մնացորդային՝ կապված (հետազոտությունը կատարվում է միայն շշայցված ջրից, որի աղբյուրը խմելու ջրի մատակարարման կենտրոնական համակարգերից ստացված խմելու ջուրն է)	մգ/լ	0,1	0,1	զզբ	3
Քլոր մնացորդային՝ ազատ (հետազոտությունը կատարվում է միայն շշայցված ջրից, որի աղբյուրը խմելու ջրի մատակարարման կենտրոնական համակարգերից ստացված խմելու ջուրն է)	մգ/լ	0,05	0,05	զզբ	3
ե. օրգանական աղտոտվածության ցուցանիշները					
Պերմանգանատային օքսիդացում	մգO <sub>2</sub> /լ	3	2	-	-
Ամոնիում և ամոնիում իոն	մգ/լ	0,1	0,25		
Նիտրիտներ (ըստ NO <sub>2</sub> -)	մգ/լ	0,5	0,005	զզբ	2
Օրգանական ածխաջուր	մգ/լ	10	5	-	-
Մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ), ամինաակտիվ	մգ/լ	0,05	0,05	զզբ	-
Նավթամթերքներ	մգ/լ	0,05	0,05	զզբ	-
Ֆենոլներ՝ ցնդող (գումարային)	մկգ/լ	0,5	0,5	զզբ	4
Քլորոֆորմ (հետազոտությունը կատարվում է միայն շշայցված ջրից, որի աղբյուրը խմելու ջրի մատակարարման կենտրոնական համակարգերից ստացված խմելու ջուրն է)	մկգ/լ	60	1,0	ս-թ	2
Բրոմֆորմ (հետազոտությունը կատարվում է միայն շշայցված ջրից, որի աղբյուրը խմելու ջրի մատակարարման կենտրոնական համակարգերից ստացված խմելու ջուրն է)	մկգ/լ	20	1,0	ս-թ	2

Երկբրոմբյուրմեթան (հետազոտությունը կատարվում է միայն շալցված ջրից, որի աղբյուրը խմելու ջրի մատակարարման կենտրոնական համակարգերից ստացված խմելու ջուրն է)	մկգ/լ	10	1,0	ս-թ	2
Բրոմերկբյուրմեթան (հետազոտությունը կատարվում է միայն շալցված ջրից, որի աղբյուրը խմելու ջրի մատակարարման կենտրոնական համակարգերից ստացված խմելու ջուրն է)	մկգ/լ	10	1,0	ս-թ	2
Չորսբյուրային ածխաջուր (հետազոտությունը կատարվում է միայն շալցված ջրից, որի աղբյուրը խմելու ջրի մատակարարման կենտրոնական համակարգերից ստացված խմելու ջուրն է)	մկգ/լ	2,0	1,0	ս-թ	2
Ֆորմալդեհիդ	մկգ/լ	25	25	ս-թ	2
Բենզ(ա)պիրեն	մկգ/լ	0,005	0,001	ս-թ	2
Երկ (2-էթիլիեքսիլ)ֆտալատ	մկգ/լ	6,0	0,1	ս-թ	2
Հեքսաքլորբենզոլ	մկգ/լ	0,2	0,2	ս-թ	2
Լինդան (ՀՔՑՀ-ի Գ- իզոմեր)	մկգ/լ	0,5	0,2	ս-թ	1
2,4-Դ	մկգ/լ	1,0	1,0	ս-թ	2
Հեպտաքլոր	մկգ/լ	0,05	0,05	ս-թ	2
ԴԴՏ (իզոմերների գումար)	մկգ/լ	0,5	0,5	ս-թ	2
Ատրազին	մկգ/լ	0,2	0,2	ս-թ	2
Միմազին	մկգ/լ	0,2	0,2	զգք	2
<p>գ. թունավորության համալիր ցուցանիշները (հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝  <math>\Sigma = \text{Պ}_1 / \text{ՄԹԻՄ}_1 + \text{Պ}_2 / \text{ՄԹԻՄ}_2 + \text{Պ}_i / \text{ՄԹԻՄ}_i</math>,                      որտեղ Պ-ն՝ շալցված խմելու ջրում տվյալ նյութի պարունակությունն է՝ արտահայտված մկգ/լ, կամ մկգ/լ                      ՄԹԻՄ-ն՝ շալցված ջրում այդ նյութի սահմանային թույլատրելի խտությունն է՝ հաշվի առնելով ջրի կարգը,                      արտահայտված մկգ/լ, կամ մկգ/լ                      Խորհուրդ տրվող մեծությունը կազմում է <math>\Sigma \leq 1</math>։</p>					
Ըստ NO <sub>2</sub> և NO <sub>3</sub> գումարի	Միավորները	<= 1	<= 1	-	-
Ըստ եռհալոմեթանների գումարի	Միավորները	<= 1	<= 1	-	-

3. Խմելու ջրի որակը գնահատվում է N 3 աղյուսակով սահմանված ճառագայթային անվտանգության ցուցանիշներին համապատասխան.

Աղյուսակ N 3

Ցուցանիշները	Չափի միավորը	Շչալցված խմելու ջրի որակի նորմատիվները՝ ոչ ավելի		Վնասակարության ցուցանիշը (նյութի վնասակարության սահմանափակող մեծությունը, ըստ որի սահմանվում են «ս-թ» (սանիտարաթունաբանական) և «զզբ» (զգայորոշման) նորմատիվները)
		առաջին կարգի	բարձր կարգի	
Ճառագայթային անվտանգության ցուցանիշներ				
Տեսակարար գումարային ալֆա ճառագայթային ակտիվություն	Բկ/լ	0,2	0,2	ճառագայթ.
Տեսակարար գումարային բետա ճառագայթային ակտիվություն	Բկ/լ	1	1	ճառագայթ.

4. Համաճարակային առումով անվտանգությունը որոշվում է մանրէաբանական և մակարուծաբանական ցուցանիշներին համապատասխան.

Աղյուսակ N 4

Ցուցանիշները	Շչալցված ջրերի որակի նորմատիվները	
	առաջին կարգի	բարձր կարգի
1) մանրէաբանական ցուցանիշներ		
Մանրէների ընդհանուր թիվը (ՄԸԹ)՝ 37°C ջերմաստիճանում	20 ԳԱՄ/1 մլ, ոչ ավելի	20 ԳԱՄ/1 մլ, ոչ ավելի
Մանրէների ընդհանուր թիվը (ՄԸԹ)՝ 22°C ջերմաստիճանում	100 ԳԱՄ/1 մլ, ոչ ավելի	100 ԳԱՄ/1 մլ, ոչ ավելի
Ընդհանուր կոլիձև մանրէներ	ԳԱՄ-երի բացակայություն 300 մլ-ում	ԳԱՄ-երի բացակայություն 300 մլ-ում
Ջերմատուրբանտ կոլիձև մանրէներ	ԳԱՄ-երի բացակայություն 300 մլ-ում	ԳԱՄ-երի բացակայություն 300 մլ-ում
Գյուկոզոդրական կոլիձև մանրէներ	ԳԱՄ-երի բացակայություն 300 մլ-ում	ԳԱՄ-երի բացակայություն 300 մլ-ում
Սուլֆիտվերականգնող կյուստրիդիումների սպորներ	ԳԱՄ-երի բացակայություն 20 մլ-ում	ԳԱՄ-երի բացակայություն 20 մլ-ում
<i>Pseudomonas aeruginosa</i>	բացակայություն 1000 մլ-ում	բացակայություն 1000 մլ-ում
2) վիրուսոլոգիական ցուցանիշներ		
Կոլիֆագեր	ԳԱՄ-երի բացակայություն 1000 մլ-ում	ԳԱՄ-երի բացակայություն 1000 մլ-ում
3) մակարուծաբանական ցուցանիշներ		
Կրիպտոսպորիդիումների օցիստեր	բացակայություն 50 լ-ում	բացակայություն 50 լ-ում
Լյամբլիանների ցիստեր	բացակայություն 50 լ-ում	բացակայություն 50 լ-ում
Հելմինտների ձվեր	բացակայություն 50 լ-ում	բացակայություն 50 լ-ում

5. Մակրո- և միկրոտարրային կազմի ֆիզիոլոգիական լիարժեքությունը որոշվում է

N 5 աղյուսակով սահմանված նորմատիվներին համապատասխան:

Աղյուսակ N 5

Ցուցանիշները	Չափի միավորը	Խմելու ջրի ֆիզիոլոգիական լիարժեքության նորմատիվները, սահմաններում	Շշայցված խմելու ջրի որակի նորմատիվները	
			առաջին կարգի	բարձր կարգի
1	2	3	4	5
Ընդհանուր հանքայնացում (չոր մնացորդ)	մգ/լ	100-1000	50-1000	200-500
Կոշտություն	մգ- էկվ/լ	1,5-7	7-ից ոչ ավելի	1,5-7
Հիմնայնություն	մգ- էկվ/լ	0,5-6,5	6,5-ից ոչ ավելի	0,5-6,5
Կալցիում (Ca)	մգ/լ	25-130 (հաշվարկային՝ ելնելով 7 մգ-էկվ/լ. առավելագույն թույլատրելի կոշտությունից և հաշվի առնելով մագնեզիումի պարունակության նվազագույն անհրաժեշտ մակարդակը կալցիումի պարունակության առավելագույն թույլատրելի մակարդակը հաշվարկելիս և հակառակը)	130-ից ոչ ավելի	25-80
Մագնեզիում (Mg)	մգ/լ	5-65 (հաշվարկային՝ ելնելով 7 մգ-էկվ/լ. առավելագույն թույլատրելի կոշտությունից և հաշվի առնելով մագնեզիումի պարունակության նվազագույն անհրաժեշտ մակարդակը կալցիումի պարունակության առավելագույն թույլատրելի մակարդակը հաշվարկելիս և հակառակը)	65-ից ոչ ավելի	5-50
Կալիում (K)	մգ/լ	-	20-ից ոչ ավելի	2-20
Բիկարբոնատներ (HCO <sub>3</sub> <sup>-</sup> )	մգ/լ	30-400	400-ից ոչ ավելի	30-400
Ֆտորիդ-իոն (F)	մգ/լ	0,5-1,5	1,5-ից ոչ ավելի	0,6-1,2

Յողիդ-իոն (J)	մկգ/լ	10-125	125-ից ոչ ավելի (ջրի յոդացումը ՄԹ-Խ-ի մակարդակով թույլատրվում է յոդացված աղի հաշվին յոդի պակասի կանխարգելման բացակայության դեպքում յոդիդ իոնների օրական թույլատրելի չափի պահպանման պայմանով նկատի ունենալով շրջակա միջավայրից օրգանիզմ մտնող իոնների գումարը)	40-60 ( ջրի յոդացումը 40-60 մկգ/լ մակարդակով թույլատրվում է որպես յոդի պակասի գանգվածային կանխարգելման եղանակ այլ կանխարգելիչ միջոցների կիրառման հետ համատեղ)
---------------	-------	--------	---	---

6. Որպես պահածոյացնող նյութեր՝ թույլատրվում են N 6 աղյուսակով սահմանված հակազդակները.

Աղյուսակ N 6

Պահածոյացնող նյութերը	Չափի միավորը	Խմելու ջրում սահմանային թույլատրելի խտությունը	Շշայցված խմելու ջրի որակի նորմատիվները, ոչ ավելի	
			առաջին կարգի	բարձր կարգի
Արծաթ (Ag)	մգ/լ	0,05	0,025	0,0025
Յոդ (J)	մգ/լ	0,125	0,06	0,06
Ածխածնի երկօքսիդ (CO <sub>2</sub> )	%	0,4 (0,4 մգ/լ-ից ավելի պարունակությունը թույլատրվում է սպառողական տարայի վրա ածխածնի երկօքսիդի պարունակությունը նշելու դեպքում )	0,4	0,2

7. Ներգործության մակարդակների (ՆՄ) չափերը (Բկ/կգ), ըստ խմելու ջրում առանձին ռադիոնուկլիդների պարունակության, սահմանված են N 7 աղյուսակով.

Աղյուսակ N 7

Նուկլիդ	ՆՄ, Բկ/կգ	Նուկլիդ	ՆՄ Բկ/կգ
H-3	7600	Tc-97	2000
Be-7	4900	Tc-97m	250
C-14	240	Tc-99	210
Na-22	43	Ru-97	910

P-32	57	Ru-103	190
P-33	570	Ru-106	20
S-35	178	Rh-105	370
Cl-36	150	Pd-103	720
Ca-45	190	Ag-105	290
Ca-47	86	Ag-110m	49
Sc-46	91	Ag-111	110
Sc-47	250	Cd-109	69
Sc-48	81	Cd-115	98
V-48	69	Cd-115m	42
Cr-51	3600	In-111	470
Mn-51	1500	In-114m	33
Mn-52	76	Sn-113	190
Mn-53	4600	Sn-125	44
Mn-54	193	Sb-122	81
Fe-55	420	Sb-124	55
Fe-59	76	Sb-125	120
Co-56	55	Te-123m	86
Co-57	650	Te-127	810
Co-58	190	Te-127m	60
Co-60	40	Te-129	2100
Ni-59	2200	Te-129m	46
Ni-63	910	Te-131	1600
Zn-65	35	Te-131m	72
Ge-71	11400	Te-132	36
As-73	530	I-123	650
As-74	110	I-125	9,1
As-76	86	I-126	4,7
As-77	340	I-129	1,3
Se-75	53	I-130	69
Br-82	250	I-131	6,2
Rb-86	49	Cs-129	2300
Sr-85	240	Cs-131	2400
Sr-89	53	Cs-132	270
Sr-90	4,9	Cs-134	7,2

Y-90	51	Cs-135	69
Y-91	57	Cs-136	46
Zr-93	120	Cs-137	11
Zr-95	140	Cs-138	1500
Nb-93m	1100	Ba-131	300
Nb-94	81	Ba-140	53
Nb-95	240	La-140	69
Mo-93	44	Ce-139	530
Mo-99	220	Ce-141	190
Tc-96	120	Ce-143	120
Ce-144	26	Th-231	400
Pr-143	110	Th-232	0,60
Nd-147	120	Th-234	40
Pm-147	530	U-230	2,5
Pm-149	140	U-231	490
Sm-151	1400	U-232	0,42
Sm-153	190	U-233	2,7
Eu-152	98	U-234	2,8
Eu-154	69	U-235	2,9
Eu-155	430	U-236	2,9
Gd-153	510	U-237	180
Tb-160	86	U-238	3,0
Er-169	370	Pa-230	150
Tm-171	1200	Pa-231	0,19
Yb-175	310	Pa-233	160
Ta-182	91	Np-237	1,3
W-181	1800	Np-239	170
W-185	310	Pu-236	1,6
Re-186	91	Pu-237	1400
Os-185	270	Pu-238	0,60
Os-191	240	Pu-239	0,55
Os-193	170	Pu-240	0,55
Ir-190	110	Pu-241	29
Ir-192	98	Pu-242	0,57
Pt-191	400	Pu-244	0,57

Pt-193m	300	Am-241	0,69
Au-198	140	Am-242	460
Au-199	310	Am-242m	0,72
Hg-197	600	Am-243	0,69
Hg-203	72	Cm-242	14
Tl-200	690	Cm-243	0,91
Tl-201	1400	Cm-244	1,1
Tl-202	300	Cm-245	0,65
Tl-204	110	Cm-246	0,65
Pb-203	570	Cm-247	0,72
Pb-210	0,20	Cm-248	0,18
Bi-206	72	Bk-249	240
Bi-207	110	Cf-246	42
Bi-210	110	Cf-248	4,9
Po-210	0,11	Cf-249	0,39
Ra-223	1,4	Cf-250	0,86
Ra-224	2,1	Cf-251	0,38
Ra-225	1,4	Cf-252	1,5
Ra-226	0,49	Cf-253	98
Ra-228	0,20	Cf-254	0,34
Th-227	16	Es-253	22
Th-228	1,9	Es-254	4,9
Th-229	0,28	Es-254m	33
Th-230	0,65		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ